

(Պարտադիր հրապարակման ենթակա ակտեր)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ

**2004 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 2006/2004 (ԵՀ) ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
սպառողների պաշտպանության վերաբերյալ
օրենքների կիրարկման համար պատասխանատու ազգային մարմինների
միջեւ համագործակցության մասին (Սպառողների պաշտպանության
հարցերով համագործակցության մասին կանոնակարգ)
(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,
հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ
մասնավորապես՝ դրա 95-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը ⁽¹⁾,

Տարածաշրջանների կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի
համաձայն ⁽²⁾,

քանի որ՝

1) Խորհրդի 1996 թվականի հուլիսի 8-ի «Ներքին շուկայի վերաբերյալ
օրենսդրության կիրարկման հարցերով զբաղվող վարչական մարմինների
միջեւ համագործակցության մասին» որոշմամբ ⁽³⁾ ընդունվել է, որ

⁽¹⁾ ՊՏ C 108, 30.04.2004թ., էջ 86:

⁽²⁾ Եվրոպական պառլամենտի 2004 թվականի ապրիլի 20-ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռեւս հրապարակված չէ) եւ Խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 7-ի որոշում:

⁽³⁾ ՊՏ C 224, 01.08.1996թ., էջ 3:

վարչական մարմինների միջև համագործակցությունը բարելավելու համար անհրաժեշտ են շարունակական ջանքեր, եւ անդամ պետություններին ու Հանձնաժողովին կոչ է արվել որպես առաջնահերթ խնդիր ուսումնասիրել օրենսդրության կիրարկման գործում վարչական համագործակցության ամրապնդման հնարավորությունը,

- 2) սպառողների շահերը պաշտպանող օրենքների համար ազգային մակարդակում գործող կիրարկման մեխանիզմները հարմարեցված չեն ներքին շուկայում կիրարկմանն առնչվող մարտահրավերներին, ուստի այդպիսի դեպքերում կիրարկման մասով օպերատիվ եւ արդյունավետ համագործակցությունը ներկայումս անհնար է դառնում: Այդ դժվարությունները խոչընդոտներ են ստեղծում պետական իրավապահ մարմինների միջև համագործակցության համար՝ սպառողների շահերը պաշտպանող օրենքների միջհամայնքային իրավախախտումները վերացնելուն կամ արգելելուն ուղղված դեպքերի հայտնաբերման, քննության եւ դրանց աջակցության հարցում: Միջսահմանային գործերում օրենսդրության արդյունավետ կիրարկման բացակայությունը վաճառողներին եւ մատակարարներին հնարավորություն է ընձեռում խուսափել նրանց նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու փորձերից՝ Համայնքի ներսում տեղափոխվելու միջոցով: Դրանով խաթարվում է թե՛ երկրի ներսում, թե՛ դրա սահմաններից դուրս գործունեություն ծավալող օրինապահ վաճառողների եւ մատակարարների միջև մրցակցությունը: Միջսահմանային գործերում հարկադրանքի միջոցների կիրառման հետ կապված դժվարությունները խաթարում են նաեւ սպառողների՝ միջսահմանային համագործակցության առաջարկների ընդունումը եւ հետեւաբար ներքին շուկայի նկատմամբ նրանց վստահությունը,
- 3) ուստի նպատակահարմար է դյուրացնել համագործակցությունը միջհամայնքային իրավախախտումների հետ առնչվելիս սպառողների շահերը պաշտպանող օրենքների կիրարկման համար պատասխանատու

- պետական մարմինների միջև եւ նպաստել ներքին շուկայի բնականոն գործունեությանը, սպառողների շահերը պաշտպանող օրենքների կիրարկման որակին եւ հետետողականությանը, ինչպես նաեւ սպառողների տնտեսական շահերի պաշտպանության դիտանցմանը,
- 4) Համայնքի օրենսդրության մեջ գոյություն ունեն դրա կիրարկման հետ կապված համագործակցության ցանցեր, որտեղ սպառողների տնտեսական շահերի պաշտպանությունից բացի առաջնային տեղ են զբաղեցնում նաեւ առողջության պահպանման խնդիրները: Սույն կանոնակարգով ստեղծված ցանցերի եւ այլ ցանցերի միջև պետք է տեղի ունենա լավագույն փորձի փոխանակում,
- 5) սույն կանոնակարգի շրջանակներում փոխադարձ օգնության մասին դրույթների գործողությունը պետք է սահմանափակվի սպառողների շահերը պաշտպանող՝ Համայնքների օրենսդրության միջհամայնքային իրավախախտումներով: Ներպետական մակարդակով իրավախախտումների բացահայտմանը հետամուտ լինելու արդյունավետության միջոցով պետք է ապահովել, որ ներպետական եւ միջհամայնքային գործարքների միջև խտրականություն չլինի: Սույն կանոնակարգը չի ազդում անդամ պետությունների կողմից Համայնքի օրենսդրության խախտումների առնչությամբ Հանձնաժողովի պարտավորությունների վրա, ինչպես նաեւ Հանձնաժողովին չի վերապահվում լիազորություններ՝ սույն կանոնակարգով սահմանված միջհամայնքային իրավախախտումները դադարեցնելու համար,
- 6) միջհամայնքային իրավախախտումներից սպառողներին պաշտպանելու համար անհրաժեշտ է Համայնքի տարածքում ստեղծել պետական իրավապահ մարմինների ցանց եւ այդ մարմիններին օժտել ընդհանուր քննչական եւ իրավապահ լիազորություններով՝ սույն կանոնակարգն արդյունավետ կիրառելու, ինչպես նաեւ վաճառողների եւ մատակարարների կողմից միջհամայնքային իրավախախտումներ կատարելը կանխելու համար,

- 7) փոխադարձության հիմունքներով միջհամայնքային իրավախախտումների վերաբերյալ տեղեկություններ փոխանակելու, դրանք հայտնաբերելու եւ քննելու, ինչպես նաեւ դրանք վերացնելուն կամ արգելելուն նպաստող գործողություններ ձեռնարկելու գործում իրավասու մարմինների ազատ համագործակցելու կարողությունը կարելու գործոն է ներքին շուկայի բնականոն գործունեությունը եւ սպառողների պաշտպանությունը երաշխավորելու համար,
- 8) իրավասու մարմինները պետք է օգտվեն նաեւ ազգային մակարդակով իրենց վերապահված այլ լիազորություններից կամ միջոցներից, այդ թվում՝ քրեական հետապանման մարմիններում գործեր հարուցելու կամ դրանց փոխանցելու լիազորությունից՝ անհրաժեշտության դեպքում փոխադարձ օգնություն տրամադրելու հայտի հիման վրա միջհամայնքային իրավախախտումներն անհապաղ վերացնելու կամ արգելելու նպատակով,
- 9) իրավասու մարմինների միջեւ փոխանակվող տեղեկատվության համար պետք է տրամադրել գաղտնիության եւ ծառայողական գաղտնիքի պաշտպանության խստագույն երաշխիքներ՝ ապահովելու համար, որ քննությունը չվտանգվի, կամ վաճառողների կամ մատակարարների հեղինակությունն անարդարացիորեն չվնասվի: Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի «Անձնական տվյալների մշակման եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի առնչությամբ անհատների պաշտպանության մասին» 95/46/ԵՀ հրահանգը ⁽¹⁾ եւ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի «Համայնքի կառույցների եւ մարմինների կողմից անձնական տվյալների մշակման եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի առնչությամբ անհատների պաշտպանության մասին» 45/2001 կանոնակարգը (ԵՀ) ⁽²⁾ կիրառվում են սույն կանոնակարգի համատեքստում,

(¹) ՊՏ L 281, 23.11.1995 թ., էջ 31: Թիվ 1882/2003/ԵՀ կանոնակարգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 31.10.2003թ., էջ 1):

(²) ՊՏ L 8, 12.01.2001թ., էջ. 1:

- 10) օրենսդրության կիրարկմանն առնչվող մարտահրավերներ հանդիպում են նաեւ Եվրոպական միության սահմաններից դուրս, ուստի Համայնքի սպառողների շահերը պետք է պաշտպանել երրորդ երկրներում գտնվող անբարեխիղճ առեւտրականներից: Հետեւաբար անհրաժեշտ է երրորդ երկրների հետ բանակցել սպառողների շահերը պաշտպանող օրենքների կիրարկման հարցում փոխադարձ օգնության վերաբերյալ միջազգային համաձայնագրեր կնքելու շուրջ: Միջազգային այդ համաձայնագրերի կնքման շուրջ պետք է բանակցել Համայնքի մակարդակով այն ոլորտներում, որոնք կարգավորվում են սույն կանոնակարգով՝ ապահովելու համար Համայնքի սպառողների պաշտպանության օպտիմալ մակարդակ եւ երրորդ երկրների հետ օրենսդրության կիրարկման մասով համագործակցության բնականոն գործունեություն,
- 11) նպատակահարմար է Համայնքի մակարդակով համակարգել անդամ պետությունների՝ միջհամայնքային իրավախախտումների հետ կապված օրենսդրության կիրարկմանն առնչվող գործողությունները՝ սույն կանոնակարգի կիրառումը բարելավելու եւ կիրարկման չափանիշների եւ հետեւողականության մակարդակի բարձրացմանը նպաստելու համար,
- 12) նպատակահարմար է Համայնքի մակարդակով համակարգել անդամ պետությունների՝ միջհամայնքային չափորոշիչների մասով համագործակցությանն առնչվող վարչական գործունեությունը՝ սպառողների շահերը պաշտպանող օրենքների կիրառումը բարելավելու համար: Այդ մոտեցումն արդեն իսկ դրսեւորվել է Եվրոպական արտադատական ցանցի ստեղծման գործում,
- 13) այն դեպքում, երբ սույն կանոնակարգի համաձայն անդամ պետությունների գործունեության համակարգումը ենթադրում է Համայնքի ֆինանսական աջակցություն, այդպիսի աջակցություն տրամադրելու մասին որոշումը պետք է ընդունվի 2004-ից մինչեւ 2007 թվականների սպառողների քաղաքականությանն աջակցող Համայնքի գործողությունների

- Ֆինանսավորման ընդհանուր շրջանակ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 8-ի 20/2004/ԵՀ որոշմամբ սահմանված ընթացակարգերի, մասնավորապես՝ այդ որոշման հավելվածի 5-րդ եւ 10-րդ գործողությունների (1) եւ ապագա որոշումների համաձայն,
- 14) սպառողների կազմակերպությունները էական դեր են խաղում սպառողների իրազեկման եւ կրթության, ինչպես նաեւ սպառողների շահերի պաշտպանության, այդ թվում՝ վեճերի կարգավորման հարցում, եւ նրանց պետք է խրախուսել համագործակցել իրավասու մարմինների հետ՝ սույն կանոնակարգի կիրառումն ամրապնդելու համար,
- 15) սույն կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն Հանձնաժողովին վերապահված կիրարկող լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան (2),
- 16) սույն կանոնակարգի կիրառման եւ սպառողների պաշտպանության արդյունավետության մասով արդյունավետ դիտանցում իրականացնելու համար պահանջվում է, որ անդամ պետությունները կանոնավոր կերպով հաշվետվություններ ներկայացնեն,
- 17) սույն կանոնակարգով հարգվում եւ պահպանվում են մասնավորապես Հիմնարար իրավունքների Եվրոպական միության խարտիայով ճանաչված հիմնարար իրավունքներն ու սկզբունքները (3): Համապատասխանաբար սույն կանոնակարգը պետք է մեկնաբանվի եւ կիրառվի ըստ այդ իրավունքների եւ սկզբունքների,

(1) ՊՏ L 5, 09.01.2004 թ., էջ 1: Թիվ 786/2004/ԵՀ որոշմամբ փոփոխված որոշում (ՊՏ L 138, 30.04.2004 թ., էջ 7):

(2) ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

(3) ՊՏ C 364, 18.12.2000 թ., էջ 1:

18) սույն կանոնակարգի նպատակը, մասնավորապես՝ սպառողների պաշտպանության մասին օրենքների կիրարկման համար պատասխանատու ազգային մարմինների միջև համագործակցությունը չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից, որովհետև այդ պետությունները չեն կարող առանձին գործելով ապահովել համագործակցության եւ համակարգման գործընթացներ, եւ հետեւաբար դրանք կարող են առավել լավ իրագործվել Համայնքի մակարդակով, ուստի Համայնքը կարող է միջոցներ ձեռնարկել՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով սահմանված սուբսիդիարության սկզբունքին համապատասխան: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն կանոնակարգով չի նախատեսվում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակներն իրագործելու համար,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ:

ԳԼՈՒԽ Ի.

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

Նպատակը

Սույն կանոնակարգով սահմանվում են այն պայմանները, որոնց համաձայն սպառողների շահերը պաշտպանող օրենքների կիրարկման համար անդամ պետություններում պատասխանատվություն ստանձնած իրավասու մարմինները համագործակցում են միմյանց եւ Հանձնաժողովի հետ՝ այդ օրենքներին համապատասխանությունը եւ ներքին շուկայի բնականոն գործունեությունն ապահովելու, ինչպես նաեւ սպառողների տնտեսական շահերի պաշտպանության մակարդակը բարձրացնելու նպատակով:

Հոդված 2

Գործողության ոլորտը

1. II եւ III գլուխներով սահմանված փոխադարձ օգնության մասին դրույթներով կարգավորվում են միջհամայնքային իրավախախտումները:
2. Սույն կանոնակարգը չի սահմանափակում միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ Համայնքի կանոնները, մասնավորապես՝ այն կանոնները, որոնք առնչվում են դատարանների ընդդատությանը եւ կիրառելի օրենքին:
3. Սույն կանոնակարգը չի սահմանափակում անդամ պետություններում քրեական եւ քաղաքացիական գործերով դատական համագործակցությունը, մասնավորապես՝ Եվրոպական դատական ցանցի գործունեությանն առնչվող միջոցների կիրառումը:
4. Սույն կանոնակարգը չի սահմանափակում անդամ պետությունների կողմից որեւէ լրացուցիչ պարտավորության կատարումը՝ կապված սպառողների կոլեկտիվ տնտեսական շահերի պաշտպանության, այդ թվում՝ քրեական հարցերով փոխադարձ օգնություն տրամադրելու հետ, որոնք բխում են այլ իրավական ակտերից, ներառյալ՝ երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերից:
5. Սույն կանոնակարգը չի սահմանափակում Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի մայիսի 19-ի «Սպառողների շահերի պաշտպանության նպատակով իրավունքը խախտող կամ դրա խախտման համար վտանգ ստեղծող գործողությունները (անգործությունը) կանխող միջոցների մասին» 98/27/ԵՀ հրահանգի գործողությունը ⁽¹⁾:
6. Սույն կանոնակարգը չի հակասում ներքին շուկայի վերաբերյալ Համայնքի օրենսդրությանը, մասնավորապես՝ այն դրույթների մասով, որոնք վերաբերում են ապրանքների եւ ծառայությունների ազատ տեղաշարժին:

(¹) ՊՏ L 166, 11.06.1998թ., էջ 51: Թիվ 2002/65/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 271, 09.10.2002թ., էջ 16) :

7. Սույն կանոնակարգը չի հակասում հեռուստատեսային հեռարձակման ծառայություններին վերաբերող Համայնքի օրենսդրությանը:

Հոդված 3

Սահմանումները

Սույն կանոնակարգի նպատակներով՝

- ա) «սպառողների շահերը պաշտպանող օրենքներ» նշանակում է անդամ պետությունների ներքին իրավական համակարգում եւ հավելվածում նշված կանոնակարգերում փոխատեղված հրահանգներ.
- բ) «միջհամայնքային իրավախախտում» նշանակում է «ա» կետով սահմանված՝ սպառողների շահերը պաշտպանող օրենքներին հակասող որեւէ գործողություն կամ անգործություն, որը վնասում կամ կարող է վնասել այն սպառողների կոլեկտիվ շահերը, որոնք բնակվում են այդ գործողության կամ անգործության ծագման կամ իրականացման անդամ պետությունից տարբեր՝ մեկ այլ անդամ պետությունում կամ անդամ պետություններում. կամ որտեղ պատասխանատու վաճառողները կամ մատակարարները հիմնադրված են. կամ որտեղ պետք է հայտնաբերվեն գործողությանը կամ անգործությանը վերաբերող ապացույցներ կամ կարելի է տեղեկատվություն.
- գ) «իրավասու մարմին» նշանակում է ցանկացած պետական մարմին, որը ստեղծվել է պետական, շրջանային կամ տեղական մակարդակով եւ ունի սպառողների շահերը պաշտպանող օրենքների կիրարկման մասով հատուկ պարտականություններ.
- դ) «կապի առանձին գրասենյակ» նշանակում է յուրաքանչյուր անդամ պետությունում մեկական պետական մարմին, որը նշանակվել է որպես այդ անդամ պետությունում սույն կանոնակարգի կիրառումը համակարգելու համար պատասխանատու մարմին.

- ե) «իրավասու պաշտոնատար անձ» նշանակում է իրավասու մարմնի պաշտոնատար անձ, որը նշանակվել է որպես սույն կանոնակարգի կիրառման համար պատասխանատու.
- զ) «հայցող մարմին» նշանակում է իրավասու մարմին, որը ներկայացնում է փոխադարձ օգնություն տրամադրելու վերաբերյալ հայտ.
- է) «հայցվող մարմին» նշանակում է իրավասու մարմին, որը ստանում է փոխադարձ օգնություն տրամադրելու վերաբերյալ հայտ.
- ը) «վաճառող կամ մատակարար» նշանակում է ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը, սպառողի շահերը պաշտպանող օրենքներին համապատասխան, իրականացնում է առետրային, ձեռնարկատիրական, արհեստագործական կամ մասնագիտական գործունեություն.
- թ) «շուկայի վերահսկողությանն ուղղված գործողություններ» նշանակում է իրավասու մարմնի կողմից ձեռնարկվող գործողություններ, որոնց նպատակը իր իրավասության տարածքում տեղի ունեցող միջհամայնքային իրավախախտումները հայտնաբերելն է.
- ժ) «սպառողի կողմից ներկայացված բողոք» նշանակում է հայտարարություն, որին կից ներկայացվում են ողջամիտ ապացույցներ այն մասին, որ վաճառողը կամ մատակարարը կատարել կամ կարող է կատարել սպառողների շահերը պաշտպանող օրենքների խախտում.
- ժա) «սպառողների կոլեկտիվ շահեր» նշանակում է մի շարք սպառողների շահեր, որոնց վնաս է հասցվել կամ կարող է վնաս հասցվել իրավախախտման հետեանքով:

Հոդված 4

Իրավասու մարմինները

1. Յուրաքանչյուր անդամ պետություն նշանակում է սույն կանոնակարգը կիրառելու համար պատասխանատու իրավասու մարմին կամ կապի առանձին գրասենյակ:
2. Յուրաքանչյուր անդամ պետություն անհրաժեշտության դեպքում կարող է նշանակել այլ պետական մարմիններ՝ սույն կանոնակարգով նախատեսված իր պարտավորությունները կատարելու համար: Նրանք կարող են նաև նշանակել այնպիսի մարմիններ, որոնք օրինական շահ ունեն միջհամայնքային իրավախախտումները վերացնելու կամ արգելելու հարցում՝ 8(3) հոդվածի համաձայն:
3. Չսահմանափակելով 4-րդ կետի գործողությունը՝ յուրաքանչյուր իրավասու մարմին ունի սույն կանոնակարգը կիրառելու համար անհրաժեշտ քննության եւ կիրարկման լիազորություններ եւ դրանք իրականացնում է ազգային օրենսդրությանը համապատասխան:
4. Իրավասու մարմինները կարող են իրականացնել 3-րդ կետում նշված լիազորությունները՝ ազգային օրենսդրությանը համապատասխան, կամ՝
 - ա) ուղղակիորեն իրենց սեփական իրավասությամբ, կամ դատական մարմինների վերահսկողության ներքո, կամ
 - բ) անհրաժեշտ որոշում կայացնելու համար իրավասու դատարաններին դիմելու միջոցով, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում՝ բողոքարկման միջոցով, եթե անհրաժեշտ որոշումը կայացնելու մասին դիմումը չի բավարարվում:
5. Քանի որ իրավասու մարմիններն իրենց լիազորություններն իրականացնում են դատարաններ դիմելու միջոցով՝ 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն, ապա այդ դատարաններն իրավասու են կայացնել անհրաժեշտ որոշումներ:

6. 3-րդ կետում նշված լիազորություններն իրականացվում են միայն այն դեպքում, երբ առկա է միջհամայնքային իրավախախտման ողջամիտ կասկած, եւ ներառում են առնվազն իրավունք՝
- ա) միջհամայնքային իրավախախտմանն առնչվող համապատասխան փաստաթղթի նկատմամբ ունենալու հասանելիություն՝ ցանկացած ձեւով.
 - բ) ցանկացած անձից պահանջելու միջհամայնքային իրավախախտմանն առնչվող տեղեկությունների տրամադրում.
 - գ) տեղում անցկացնելու անհրաժեշտ ստուգումներ.
 - դ) գրավոր պահանջելու, որ համապատասխան վաճառողը կամ մատակարարը վերացնի միջհամայնքային իրավախախտումները.
 - ե) միջհամայնքային իրավախախտումների համար պատասխանատու վաճառողին կամ մատակարարին պարտավորեցնել վերացնելու միջսահմանային իրավախախտումները եւ անհրաժեշտության դեպքում հրապարակելու արդյունքում ստանձնած պարտավորությունը.
 - զ) պահանջելու վերացնել կամ արգելել ցանկացած միջհամայնքային իրավախախտում եւ անհրաժեշտության դեպքում հրապարակելու արդյունքում կայացված որոշումները.
 - է) որոշումը չկատարելու դեպքում պարտվող կողմ ճանաչված պատասխանողից պահանջելու պետական բյուջե կամ ներպետական օրենսդրությանը համապատասխան կամ դրա համաձայն նշանակված շահառուին կատարել վճարումներ:
7. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավասու մարմիններն ունենան սույն կանոնակարգի կիրառման համար անհրաժեշտ բավարար ռեսուրսներ: Իրավասու պաշտոնատար անձինք պետք է պահպանեն մասնագիտական չափանիշները եւ ենթարկվեն համապատասխան ներքին ընթացակարգերին կամ վարքագծի կանոններին՝ ապահովելու համար

մասնավորապես 13-րդ հոդվածով սահմանված անձնական տվյալների մշակման առնչությամբ անձանց պաշտպանությունը, ընթացակարգային անկողմնակալությունը, ինչպես նաև գաղտնիության եւ մասնագիտական գաղտնիության վերաբերյալ դրույթների պատշաճ իրականացումը:

8. Յուրաքանչյուր իրավասու մարմին հանրությանը տեղեկացնում է սույն կանոնակարգի համաձայն ստանձնած իր իրավունքների եւ պարտականությունների մասին եւ նշանակում է իրավասու պաշտոնատար անձանց:

Հոդված 5

Ցանկերը

1. Յուրաքանչյուր անդամ պետություն Հանձնաժողովին եւ այլ անդամ պետությունների տեղեկացնում է իրավասու մարմինների եւ այլ պետական իշխանությունների եւ մարմինների, ինչպես նաև կապի առանձին գրասենյակի կազմի մասին, որոնք օրինական շահ ունեն միջհամայնքային իրավախախտումները վերացնելու կամ արգելելու գործում:
2. Հանձնաժողովը Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակում է կապի առանձին գրասենյակների եւ իրավասու մարմինների ցանկը:

ԳԼՈՒԽ II

ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ*Հոդված 6***Հայտի հիման վրա տեղեկատվության փոխանակման կարգը**

1. Համաձայն 4-րդ հոդվածի՝ հայցվող մարմինը, հայցող մարմնի հայտի հիման վրա, անհապաղ տրամադրում է համապատասխան տեղեկատվություն, որն անհրաժեշտ է պարզելու, թե արդյոք տեղի է ունեցել միջհամայնքային իրավախախտում, կամ արդյոք հիմնավոր կասկած կա ենթադրելու, որ կարող է տեղի ունենալ այդպիսի իրավախախտում:
2. Համաձայն 4-րդ հոդվածի՝ հայցվող մարմինն անհրաժեշտության դեպքում այլ պետական մարմինների աջակցությամբ սկսում է համապատասխան քննություն կամ ձեռնարկում է այլ անհրաժեշտ կամ համապատասխան միջոցներ՝ պահանջվող տեղեկատվությունը հավաքագրելու համար:
3. Հայցող մարմնի պահանջով հայցվող մարմինը կարող է թույլատրել հայցող մարմնի իրավասու պաշտոնատար անձին քննության ընթացքում ուղեկցել հայցվող մարմնի պաշտոնատար անձանց:
4. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19 (2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 7

Առանց հայտ ներկայացնելու տեղեկատվության փոխանակման կարգը

1. Այն դեպքում, երբ իրավասու մարմինը տեղեկանում է միջհամայնքային իրավախախտման մասին կամ այդպիսի իրավախախտում տեղի ունենալու վերաբերյալ ունի հիմնավոր կասկածներ, այն այդ մասին ծանուցում է այլ անդամ պետությունների իրավասու մարմիններին եւ Հանձնաժողովին՝ անհապաղ տրամադրելով նրանց բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
2. Այն դեպքում, երբ իրավասու մարմինը ձեռնարկում է լրացուցիչ հարկադրանքի միջոցներ կամ միջհամայնքային իրավախախտումների առնչությամբ ստանում է փոխադարձ օգնության մասին հայտեր, այն այդ մասին ծանուցում է այլ անդամ պետությունների իրավասու մարմիններին եւ Հանձնաժողովին:
3. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 8

Հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին պահանջը

1. Հայցող մարմնի պահանջով հայցվող մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ հարկադրանքի միջոցները՝ միջհամայնքային իրավախախտումը անհապաղ վերացնելու կամ արգելելու համար:
2. 1-ին կետի համաձայն իր պարտավորությունները կատարելու նպատակով հայցվող մարմինն իրականացնում է 4(6) հոդվածով սահմանված լիազորությունները, ինչպես նաեւ ազգային իրավունքով նրան վերապահված

լրացուցիչ այլ լիազորություններ: Հայցվող մարմինն անհրաժեշտության դեպքում այլ պետական մարմինների աջակցությամբ որոշում է այն հարկադրանքի միջոցները, որոնք պետք է ձեռնարկվեն միջհամայնքային իրավախախտումը համաչափ, օպերատիվ եւ արդյունավետ կերպով վերացնելու կամ արգելելու համար:

3. Հայցվող մարմինը նաեւ կարող է իր պարտավորությունները կատարել 1-ին եւ 2-րդ կետերին համապատասխան՝ հանձնարարելով 4(2) հոդվածի երկրորդ նախադասության համաձայն նշանակված, միջհամայնքային իրավախախտումները վերացնելու կամ արգելելու հարցում օրինական շահ ունեցող մարմինն ձեռնարկել ազգային իրավունքի համաձայն իրեն հասանելի բոլոր անհրաժեշտ հարկադրանքի միջոցները՝ հայցվող մարմնի անունից միջհամայնքային իրավախախտումը վերացնելու կամ արգելելու համար: Այդ մարմնի կողմից միջհամայնքային իրավախախտումը անհապաղ չվերացնելու կամ չարգելելու դեպքում հայցվող մարմնի՝ 1-ին եւ 2-րդ կետերով սահմանված պարտավորությունները մնում են ուժի մեջ:
4. Հայցվող մարմինը կարող է ձեռնարկել միայն 3-րդ կետով սահմանված միջոցները, եթե այդ միջոցների կիրառման վերաբերյալ հայցող մարմնի հետ խորհրդակցելուց հետո եւ՝ հայցող, եւ՝ հայցվող մարմինները համաձայն են, որ՝
 - 3-րդ կետով սահմանված միջոցների կիրառմամբ, ամենայն հավանականությամբ, հնարավոր է վերացնել կամ արգելել միջհամայնքային իրավախախտումը առնվազն նույնքան օպերատիվ եւ արդյունավետ կերպով, որքան դա կարվեր հայցվող մարմնի գործողության արդյունքում.
 - եւ
 - ազգային իրավունքի համաձայն նշանակված մարմնի հանձնարարությունները չեն հանգեցնում նրան, որ 13-րդ հոդվածով պաշտպանված տեղեկատվությունը բացահայտվի այդ մարմնի համար:

5. Եթե հայցող մարմինը համարում է, որ 4-րդ կետով սահմանված պայմանները չեն կատարվում, ապա նա այդ մասին գրավոր տեղեկացնում է հայցվող մարմնին՝ նշելով իր եզրակացության հիմքերը: Եթե հայցող մարմինը եւ հայցվող մարմինը համաձայնության չեն գալիս, ապա հայցող մարմինը կարող է այդ հարցն ուղղել Հանձնաժողովին, որը 19(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն ներկայացնում է իր եզրակացությունը:
6. Հայցվող մարմինը կարող է 1-ին եւ 2-րդ կետերում նշված հարկադրանքի միջոցներն իրականացնելու ընթացքում խորհրդակցել հայցող մարմնի հետ: Հայցվող մարմնին անհապաղ ծանուցում է հայցող մարմնին, այլ անդամ պետությունների իրավասու մարմիններին եւ Հանձնաժողովին իրականացված միջոցների եւ միջհամայնքային իրավախախտման վրա դրանց ազդեցության, այդ թվում՝ դրանց վերացման մասին:
7. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 9

Շուկայի վերահսկողության եւ կիրարկման գործողությունների համակարգումը

1. Իրավասու մարմինները համակարգում են շուկայի վերահսկողության, ինչպես նաեւ կիրարկման իրենց գործողությունները: Այդ նպատակի իրագործման համար նրանք փոխանակում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:
2. Այն դեպքում, երբ իրավասու մարմինները տեղեկանում են, որ միջհամայնքային իրավախախտումը վնասում է երկուսից ավելի անդամ պետությունների սպառողների շահերը, ապա համապատասխան իրավասու մարմինները կապի առանձին գրասենյակի միջոցով համակարգում են

կիրարկման իրենց գործողությունների եւ փոխադարձ օգնության հայտ ներկայացնելու հետ կապված հարցերը: Մասնավորապես նրանք պետք է փորձեն իրականացնել միաժամանակյա քննություն եւ կիրառել հարկադրանքի միջոցներ:

3. Իրավասու մարմինները նախապես տեղեկացնում են Հանձնաժողովին այդ համակարգման մասին եւ կարող են դրանում մասնակցելու համար հրավիրել Հանձնաժողովի կողմից այդ նպատակով լիազորված պաշտոնատար անձանց եւ այլ ուղեկցող անձանց:
4. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 10

Տվյալների բազան

1. Հանձնաժողովը վարում է էլեկտրոնային տվյալների բազա, որտեղ պահպանում եւ մշակում է 7-րդ, 8-րդ եւ 9-րդ հոդվածների համաձայն ստացած տեղեկությունները: Տվյալների բազան խորհրդատվության համար պետք է հասանելի դարձվի միայն իրավասու մարմինների կողմից: Տվյալների բազայում տեղեկատվության պահպանման եւ այդ տվյալներում ներառված անձնական տվյալների մշակման պարտականությունների առնչությամբ իրավասու մարմինները հանդես են գալիս որպես հսկիչներ՝ համաձայն 95/46/ԵՀ հրահանգի 2(դ) հոդվածի: Տվյալների բազայում տեղեկատվության պահպանման եւ այդ տվյալներում ներառված անձնական տվյալների մշակման պարտավորության առնչությամբ իրավասու մարմինները հանդես են գան որպես հսկիչներ՝ համաձայն 45/2001/ԵՀ կանոնակարգի 2(դ) հոդվածի:

2. Այն դեպքում, երբ իրավասու մարմինը պարզում է, որ 7-րդ հոդվածի համաձայն միջհամայնքային իրավախախտման մասին իր կողմից արված ծանուցումը հետագայում անհիմն է ճանաչվել, այն հետ է վերցնում ծանուցումը, եւ Հանձնաժողովն անհապաղ հեռացնում է տեղեկատվությունը տվյալների բազայից: Այն դեպքում, երբ 8(6) հոդվածի համաձայն՝ հայցվող մարմինը միջհամայնքային իրավախախտումը վերացնելու մասին ծանուցում է Հանձնաժողովին, միջհամայնքային իրավախախտման հետ կապված պահպանված տվյալները պետք է ջնջվեն ծանուցումը ստանալուց հինգ տարի հետո:
3. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ III

ՓՈՒՍԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հոդված 11

Ընդհանուր պարտականությունները

1. Իրավասու մարմինները իրականացնում են սույն կանոնակարգով իրենց վերապահված պարտավորություններն այնպես, ինչպես նրանք հանդես կգային իրենց երկրի սպառողների անունից կամ սեփական անունից կամ իրենց երկրի մեկ այլ իրավասու մարմնի պահանջով:
2. Անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար իրավասու մարմինների եւ այլ պետական մարմինների

Եւ միջհամայնքային իրավախախտումների վերացման կամ արգելման հարցում օրինական շահ ունեցող եւ իրենց կողմից նշանակված մարմինների, ինչպես նաեւ իրավասու դատարանների կողմից կապի առանձին գրասենյակի միջոցով սույն կանոնակարգի կիրառման արդյունավետ համակարգումը:

3. Անդամ պետությունները խրախուսում են իրավասու մարմինների եւ ազգային իրավունքի համաձայն միջհամայնքային իրավախախտումների վերացման կամ արգելման հարցում օրինական շահ ունեցող այլ մարմինների միջեւ համագործակցությունը՝ հնարավոր միջհամայնքային իրավախախտումների մասին իրավասու մարմինների անհապաղ ծանուցված լինելն ապահովելու համար:

Հոդված 12

Փոխադարձ օգնություն տրամադրելու մասին հայտը եւ տեղեկությունների փոխանակման ընթացակարգերը

1. Հայցող մարմինն ապահովում է, որ փոխադարձ օգնություն տրամադրելու մասին բոլոր հայտերը պարունակեն բավարար տեղեկություններ, այդ թվում՝ այնպիսի անհրաժեշտ ապացույցներ, որոնք կարող են ձեռք բերվել միայն հայցող մարմնի պետության տարածքում՝ հնարավորություն տալով հայցվող մարմնին բավարարել հայտը:
2. Հայցող մարմինը հայտերը հայցվող մարմնի կապի առանձին գրասենյակ է ուղարկում կապի իր առանձին գրասենյակի միջոցով: Հայցվող մարմնի կապի առանձին գրասենյակը հայտերն անհապաղ ուղարկում է համապատասխան իրավասու մարմին:

3. Օգնության մասին հայտերի ձեւակերպումները եւ տեղեկությունների ամբողջ փոխանակումը կատարվում են գրավոր՝ օգտագործելով օրինակելի ձեւ, եւ ուղարկվում են էլեկտրոնային եղանակով 10-րդ հոդվածում սահմանված տվյալների բազայի միջոցով:
4. Հայտերի եւ տեղեկությունների փոխանակման համար օգտագործվող լեզուները համաձայնեցվում են համապատասխան իրավասու մարմինների կողմից մինչեւ հայտեր ներկայացնելը: Եթե հնարավոր չէ ձեռք բերել համաձայնություն, ապա հայտերը ներկայացվում են հայցող մարմնի անդամ պետության պաշտոնական լեզվով (լեզուներով), իսկ պատասխաններն ուղարկվում են հայցվող մարմնի անդամ պետության պաշտոնական լեզվով (լեզուներով):
5. Հայտի արդյունքում փոխանակվող տեղեկություններն անմիջականորեն ուղարկվում են հայցող մարմին, միեւնույն ժամանակ՝ հայցող եւ հայցվող մարմինների կապի առանձին գրասենյակներ:
6. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 13

Տեղեկությունների օգտագործումը եւ անձնական տվյալների եւ մասնագիտական ու առեւտրային գաղտնիքի պաշտպանությունը

1. Ստացված տեղեկությունները կարող են օգտագործվել միայն սպառողների շահերը պաշտպանող օրենքների հետ համապատասխանությունն ապահովելու համար:
2. Իրավասու մարմինները կարող են որպես ապացույց վկայակոչել ցանկացած տեղեկություն, փաստաթուղթ, արդյունք, հայտարարություն, վավերացված

պատճեն կամ հետախուզական տեղեկատվություն, որն ուղարկվել է նույն հիմքով, ինչ որ իրենց երկրում ձեռք բերված նմանօրինակ փաստաթղթերը:

3. Իրավասու մարմինների, դատարանների, այլ պետական մարմինների եւ Հանձնաժողովների աշխատակիցներին որեւէ ձեռով ուղարկված տեղեկությունների, այդ թվում՝ Հանձնաժողովին ծանուցված տեղեկությունների եւ 10-րդ հոդվածում նշված տվյալների բազայում պահվող տեղեկությունների հրապարակումը կարող է վտանգել՝

- անձի մասնավոր կյանքի գաղտնիության եւ անձեռնմխելիության պաշտպանությունը, մասնավորապես՝ անձնական տվյալների պաշտպանության մասին Համայնքի օրենսդրության համաձայն.

- ֆիզիկական կամ իրավաբանական անձի առեւտրային շահերը, այդ թվում՝ մտավոր սեփականությունը.

- դատարանի վարույթները եւ իրավաբանական խորհրդատվությունը.

կամ

- տեսչական ստուգումների կամ քննությունների նպատակը.

դրանք պետք է լինեն գաղտնի եւ կարգավորվեն մասնագիտական գաղտնիության պաշտպանության պարտավորությամբ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց հրապարակումն անհրաժեշտ է միջհամայնքային իրավախախտումը վերացնելու կամ արգելելու համար, եւ տեղեկություններն ուղարկող մարմինը համաձայն է, որ այն հրապարակվի:

4. Սույն կանոնակարգը կիրառելու նպատակով անդամ պետությունները պետք է ընդունեն օրենսդրական միջոցներ, որոնք անհրաժեշտ են 95/46/ԵՀ հրահանգի 10-րդ, 11-րդ եւ 12-րդ հոդվածներով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները սահմանափակելու համար՝ նպատակ ունենալով երաշխավորել այդ հրահանգի 13(1)(դ) եւ (զ) հոդվածում

նշված շահերը: Հանձնաժողովը կարող է սահմանափակել 45/2001 կանոնակարգի (ԵՀ) 4(1), 11-րդ, 12(1), 13-17-րդ հոդվածներով եւ 37(1) հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, եթե այդպիսի սահմանափակումն անհրաժեշտ միջոց է այդ կանոնակարգի 20(1)(ա) եւ (ե) հոդվածում նշված շահերը երաշխավորելու համար:

5. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 14

Տեղեկությունների փոխանակումը երրորդ երկրների հետ

1. Այն դեպքում, երբ իրավասու մարմինը տեղեկությունները ստանում է երրորդ երկրի մարմնից, այն այդ տեղեկություններն ուղարկում է այլ անդամ պետությունների համապատասխան իրավասու մարմիններ, եթե դա թույլատրվում է երրորդ երկրի հետ կնքված օգնություն տրամադրելու մասին երկկողմ համաձայնագրերով եւ համապատասխանում է անձնական տվյալների պաշտպանության առնչությամբ անհատների պաշտպանության վերաբերյալ Համայնքի օրենսդրությանը:
2. Սույն կանոնակարգի համաձայն ուղարկված տեղեկությունները կարող են իրավասու մարմնի կողմից ուղարկվել նաեւ երրորդ երկրի մարմին՝ համաձայն երրորդ երկրի հետ կնքած օգնություն տրամադրելու մասին երկկողմ համաձայնագրի՝ պայմանով, որ ձեռք է բերվել տեղեկություններն ի սկզբանե ուղարկած իրավասու մարմնի համաձայնությունը, եւ դա համապատասխանում է անձնական տվյալների պաշտպանության առնչությամբ անհատների պաշտպանության վերաբերյալ Համայնքի օրենսդրությանը:

*Հոդված 15***Պայմանները**

1. Անդամ պետությունները հրաժարվում են սույն կանոնակարգի կիրառմամբ առաջացած ծախսերի հատուցման՝ միմյանց ներկայացված բոլոր պահանջներից: Այնուամենայնիվ, հայցող մարմնի անդամ պետությունը շարունակում է պատասխանատվություն կրել հայցվող մարմնի անդամ պետության առջեւ՝ միջհամայնքային իրավախախտման առնչությամբ դատարանի կողմից անհիմն ճանաչված միջոցների հետեւանքով առաջացած ցանկացած ծախսի եւ կորստի համար:
2. Հայցվող մարմինը, խորհրդակցելով հայցող մարմնի հետ, կարող է մերժել 8-րդ հոդվածով նախատեսված հարկադրանքի միջոցներ կիրառելու պահանջը բավարարելը, եթե՝
 - ա) հայցվող կամ հայցող մարմնի անդամ պետության դատական մարմիններում միեւնույն միջհամայնքային իրավախախտումների առնչությամբ եւ միեւնույն վաճառողների կամ մատակարարների նկատմամբ արդեն հարուցվել է դատական վարույթ, կամ կայացվել է վերջնական վճիռ.
 - բ) հայցվող մարմինը համապատասխան քննություն իրականացնելուց հետո համարում է, որ միջհամայնքային իրավախախտում տեղի չի ունեցել.
կամ
 - գ) համարում է, որ հայցող մարմինը բավարար տեղեկություններ չի տրամադրել՝ համաձայն 12(1) հոդվածի՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայցվող մարմինն արդեն մերժել է միջհամայնքային իրավախախտման առնչությամբ 3(գ) կետով նախատեսված հայտը բավարարելը:

3. Հայցվող մարմինը կարող է մերժել տեղեկություն ստանալու հայտը՝ համաձայն 6-րդ հոդվածի, եթե՝
- ա) հայցող մարմնի հետ խորհրդակցելուց հետո համարում է, որ պահանջվող տեղեկություններն անհրաժեշտ չեն հայցող մարմնին՝ պարզելու, թե արդյոք տեղի է ունեցել միջհամայնքային իրավախախտում, կամ արդյոք հիմնավոր կասկած կա ենթադրելու, որ տեղի է ունեցել այդպիսի իրավախախտում.
 - բ) հայցող մարմինը չի համաձայնում, որ տեղեկությունների նկատմամբ կիրառվեն 13(3) հոդվածով սահմանված գաղտնիության եւ մասնագիտական գաղտնիության վերաբերյալ դրույթները.
- կամ
- գ) հայցվող կամ հայցող մարմնի անդամ պետության դատական մարմիններում միեւնույն միջհամայնքային իրավախախտումների առնչությամբ եւ միեւնույն վաճառողների կամ մատակարարների նկատմամբ արդեն սկսվել է քրեական գործով քննություն, կամ հարուցվել է դատական վարույթ, կամ կայացվել է վերջնական վճիռ:
4. Հայցվող մարմինը կարող է որոշել չկատարել 7-րդ հոդվածում նշված պարտավորությունները, եթե հայցվող կամ հայցող մարմնի անդամ պետության դատական մարմիններում միեւնույն միջհամայնքային իրավախախտումների առնչությամբ եւ միեւնույն վաճառողների կամ մատակարարների նկատմամբ արդեն սկսվել է քրեական գործով քննություն, կամ հարուցվել է դատական վարույթ, կամ կայացվել է վերջնական վճիռ:
5. Հայցվող մարմինը տեղեկացնում է հայցող մարմնին եւ Հանձնաժողովին օգնության խնդրանքը մերժելու հիմքերի մասին: Հայցող մարմինը կարող է այդ հարցն ուղղել Հանձնաժողովին, որը 19(2) հոդվածում նշված ընթացակարգի համաձայն ներկայացնում է իր եզրակացությունը:

6. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ միջոցներն ընդունվում են 19(2) հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան:

ԳԼՈՒԽ IV

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 16

Կիրարկման համակարգումը

1. Սույն կանոնակարգի նպատակներն անհրաժեշտ չափով իրականացնելու համար անդամ պետությունները միմյանց եւ Հանձնաժողովին տեղեկացնում են այնպիսի ոլորտներում Համայնքի շահերի շրջանակներում իրենց կողմից իրականացվող գործողությունների մասին, ինչպիսիք են՝
- ա) սպառողների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության կիրարկման համար պատասխանատու պաշտոնատար անձանց վերապատրաստումը, այդ թվում՝ լեզվի դասընթացների եւ ուսուցողական սեմինարների կազմակերպումը.
 - բ) սպառողների կողմից ներկայացրած բողոքների հավաքագրումը եւ դասակարգումը.
 - գ) իրավասու պաշտոնատար անձանց ոլորտային ցանցերի ստեղծումը.
 - դ) տեղեկատվական եւ հաղորդակցման գործիքների մշակումը.
 - ե) սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության կիրարկման համար պատասխանատու պաշտոնատար անձանց համար չափանիշների, մեթոդաբանության եւ ուղեցույցների մշակումը.

զ) իրենց պաշտոնատար անձանց փոխանակման իրականացումը:

Անդամ պետությունները, համագործակցելով Հանձնաժողովի հետ, կարող են ընդհանուր գործունեություն իրականացնել (ա)-(զ) ենթակետերում նշված ոլորտներում: Անդամ պետությունները, համագործակցելով Հանձնաժողովի հետ, մշակում են սպառողների բողոքների դասակարգման համար նախատեսված ընդհանուր շրջանակ:

2. Իրավասու մարմինները համագործակցությունը բարելավելու նպատակով կարող են իրականացնել իրավասու պաշտոնատար անձանց փոխանակում: Իրավասու մարմիններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում, որպեսզի փոխանակման գործընթացին մասնակցած իրավասու պաշտոնատար անձինք արդյունավետ մասնակցություն ունենան իրավասու մարմնի գործունեության մեջ: Այդ նպատակով նշված պաշտոնատար անձինք լիազորված են իրականացնելու ընդունող երկրի իրավասու մարմնի կողմից իրենց վստահված պարտականությունները՝ իր անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:
3. Փոխանակման ընթացքում իրավասու պաշտոնատար անձի քաղաքացիական եւ քրեական պատասխանատվությունը դիտարկվում է այնպես, ինչպես ընդունող իրավասու պաշտոնատար անձի քաղաքացիական եւ քրեական պատասխանատվությունը: Փոխանակման ծրագրին մասնակցած իրավասու պաշտոնատար անձինք պետք է պահպանեն մասնագիտական չափանիշները եւ ենթարկվեն ընդունող երկրի իրավասու մարմնի համապատասխան կարգապահական ներքին այն կանոններին, որոնք մասնավորապես ապահովում են անձնական տվյալների մշակման առնչությամբ անձանց պաշտպանությունը, ընթացակարգային անկողմնակալությունը եւ 13-րդ հոդվածով սահմանված գաղտնիության եւ մասնագիտական գաղտնիության դրույթների պատշաճ պահպանումը:

4. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ Համայնքի միջոցները, այդ թվում՝ համատեղ գործողություններ իրականացնելու համար անհրաժեշտ պայմանավորվածություններն ընդունվում են 19(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 17

Վարչական համագործակցությունը

1. Սույն կանոնակարգի նպատակներն անհրաժեշտ չափով իրականացնելու համար անդամ պետությունները միմյանց եւ Հանձնաժողովին տեղեկացնում են այնպիսի ոլորտներում Համայնքի շահերի շրջանակներում իրենց կողմից իրականացվող գործողությունների մասին, ինչպիսիք են՝
- ա) սպառողների համար նախատեսված տեղեկությունները եւ խորհրդատվությունը.
 - բ) սպառողների ներկայացուցիչների գործունեությանն աջակցելը.
 - գ) սպառողների վեճերի արտադատական կարգով կարգավորման համար պատասխանատու մարմինների գործունեությանն աջակցելը.
 - դ) սպառողների համար արդարադատության հասանելիությանն աջակցելը.
 - ե) վիճակագրական տվյալների, հետազոտության արդյունքների կամ սպառողների վարքագծի, վերաբերմունքի եւ արդյունքների հետ կապված այլ տեղեկությունների հավաքագրումը:

Անդամ պետությունները, համագործակցելով Հանձնաժողովի հետ, կարող են ընդհանուր գործունեություն իրականացնել (ա)-(ե) ենթակետերում նշված ոլորտներում: Անդամ պետությունները, Հանձնաժողովի հետ համագործակցելով, մշակում են ընդհանուր շրջանակ՝ (ե) ենթակետում նշված գործողությունների համար:

2. Սույն հոդվածի իրականացման համար անհրաժեշտ Համայնքի միջոցները, այդ թվում՝ համատեղ գործողություններ իրականացնելու համար անհրաժեշտ պայմանավորվածություններն ընդունվում են 19(2) հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան:

Հոդված 18

Միջազգային համաձայնագրերը

Համայնքը սույն կանոնակարգով կարգավորվող ոլորտներում համագործակցում է երրորդ երկրների եւ իրավասու միջազգային կազմակերպությունների հետ՝ սպառողների տնտեսական շահերի պաշտպանության մակարդակը բարձրացնելու համար: Համագործակցության պայմանավորվածությունները, այդ թվում՝ փոխադարձ օգնության վերաբերյալ պայմանավորվածությունների հաստատումը կարող են լինել Համայնքի եւ համապատասխան երրորդ երկրների միջեւ համաձայնագրերի առարկա:

ԳԼՈՒԽ V

ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ*Հոդված 19***Կոմիտեի գործունեության կարգը**

1. Հանձնաժողովին աջակցում է Կոմիտեն:
2. Այն դեպքերում, երբ հղում է կատարվում սույն կետին, կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երեք ամիս:
3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

*Հոդված 20***Կոմիտեի խնդիրները**

1. Կոմիտեն կա՛մ սեփական նախաձեռնությամբ, կա՛մ անդամ պետության ներկայացուցչի խնդրանքով կարող է ուսումնասիրել իր նախագահի կողմից բարձրացված՝ սույն կանոնակարգի կիրառմանը վերաբերող բոլոր հարցերը:
2. Մասնավորապես այն ուսումնասիրում եւ գնահատում է, թե ինչպես են գործում սույն կանոնակարգով նախատեսված համագործակցության պայմանավորվածությունները:

*Հոդված 21***Հաշվետվությունները**

1. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն կանոնակարգով կարգավորվող ոլորտում, կամ այն համաձայնագրերի տեքստերը, որոնք կնքված չեն առանձին գործերի մասով:
2. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո յուրաքանչյուր երկու տարին մեկ անդամ պետությունները սույն կանոնակարգի կիրառման վերաբերյալ հաշվետվություն են ներկայացնում Հանձնաժողով: Հանձնաժողովը նշված հաշվետվությունները հասանելի է դարձնում հանրությանը:
3. Հաշվետվությունները ներառում են հետևյալը՝
 - ա) իրավասու մարմինների կազմակերպման, լիազորությունների, ռեսուրսների կամ պարտականությունների մասին ցանկացած նոր տեղեկատվություն.
 - բ) միջհամայնքային իրավախախտումներ կատարելու միտումներին, միջոցներին կամ մեթոդներին վերաբերող ցանկացած տեղեկություն, մասնավորապես՝ սույն կանոնակարգում կամ սպառողների շահերը պաշտպանող օրենքներում հայտնաբերված թերություններին կամ բացթողումներին վերաբերող տեղեկություններ.
 - գ) իրենց արդյունավետությունն ապացուցած կիրարկման մեթոդների մասին ցանկացած տեղեկություն.
 - դ) իրավասու մարմինների գործունեությանը վերաբերող ամփոփ վիճակագրություն, ինչպիսիք են սույն կանոնակարգով նախատեսված գործողությունները, ստացված բողոքները, կիրարկման գործողություններն ու վճիռները.

- ե) սպառողների շահերը պաշտպանող օրենքներում կարելուր ներպետական վճիռների մեկնաբանությունների ամփոփագրեր.
- զ) սույն կանոնակարգի կիրառման վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն:
4. Հանձնաժողովը Եվրոպական պառլամենտ ու Խորհուրդ է ներակայացնում սույն կանոնակարգի կիրառման մասին հաշվետվություն՝ անդամ պետությունների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա:

Հոդված 22

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Այն կիրառվում է 2005 թվականի դեկտեմբերի 29-ից:

II եւ III գլուխներում սահմանված փոխադարձ օգնության մասին դրույթները կիրառվում են 2006 թվականի դեկտեմբերի 29-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Ստրասբուրգում 2004 թվականի հոկտեմբերի 27-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝

Խորհրդի կողմից՝

Նախագահ

Նախագահ

Ջ.Փ. Բորել Ֆոնտելես

Ա. Նիկոլայ

*ՀԱՎԵԼՎԱԾ***3(ա) հոդվածով կարգավորվող հրահանգներ եւ կանոնակարգեր⁽¹⁾**

1. «Մոլորեցնող գովազդի մասին անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչական ակտերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1984 թվականի սեպտեմբերի 12-ի 84/450/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 250, 19.09.1984 թ., էջ 17): Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 97/55/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 290, 23.10.1997թ., էջ 18):
2. «Ձեռնարկության շենքից դուրս բանակցված պայմանագրերի առումով սպառողների պաշտպանության մասին» Խորհրդի 1985 թվականի դեկտեմբերի 20-ի 85/577/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 372, 31.12.1985թ., էջ 31):
3. «Սպառողական վարկի մասին անդամ պետությունների օրենքների, կանոնակարգերի եւ վարչական ակտերի համապատասխանեցման մասին» Խորհրդի 1986 թվականի դեկտեմբերի 22-ի 87/102/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 42, 12.02.1987թ., էջ 48): Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 98/7/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 101, 01.04.1998 թ., էջ 17):
4. «Հեռուստատեսարձակման գործունեության իրականացման վերաբերյալ անդամ պետությունների իրավունքով, կանոնակարգերով կամ վարչարարությամբ սահմանված որոշակի դրույթների համակարգման մասին» Խորհրդի 1989 թվականի հոկտեմբերի 3-ի 89/552/ԵՏՀ հրահանգ՝ 10-21-րդ հոդվածներ (ՊՏ L 298, 17.10.1989թ., էջ 23): Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 97/36/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 202, 30.07.1997թ., էջ 60):

(¹) Թիվ 1, 6, 8 եւ 13 հրահանգները պարունակում են հատուկ դրույթներ:

5. «Զբոսաշրջային փաթեթների, զբոսաշրջային համալիր ծառայությունների փաթեթների մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 13–ի 90/314/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ 59):
6. «Սպառողական պայմանագրերի անարդար պայմանների մասին» Խորհրդի 1993 թվականի ապրիլի 5–ի 93/13/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 95, 21.04.1993թ., էջ 29): Հանձնաժողովի 2002/995/ԵՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ L 353, 30.12.2002թ., էջ 1):
7. «Անշարժ գույքի տարածամկետ օգտագործման իրավունքի ձեռքբերման պայմանագրերի որոշակի ասպեկտների հետ կապված գնորդների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1994 թվականի հոկտեմբերի 26–ի 94/47/ԵՀ հրահանգ (ՊՏ L 280, 29.10.1994թ., էջ 83):
8. «Հեռահար համաձայնագրերի հետ կապված սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի մայիսի 20–ի 97/7/ԵՀ հրահանգ (ՊՏ L 44, 04.06.1997թ., էջ 19): 2002/65/ԵՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ L 271, 09.10.2002թ., էջ 16):
9. Համեմատական գովազդ ներառելու նպատակով մոլորեցնող գովազդի մասին 84/450/ԵՏՀ հրահանգը փոփոխող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1997 թվականի հոկտեմբերի 6–ի 97/55/ԵՀ հրահանգ:
10. «Սպառողներին առաջարկվող ապրանքների գնանշման մասով սպառողների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16–ի 98/6/ԵՀ հրահանգ (ՊՏ L 80, 18.03.1998թ., էջ 27):
11. «Սպառողական ապրանքների վաճառքի որոշակի հայեցակետերի և տրամադրվող երաշխիքների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1999 թվականի մայիսի 25–ի 1999/44/ԵՀ հրահանգ (ՊՏ L 177, 07.07.1999թ., էջ 12):

12. «Ներքին շուկայում տեղեկատվական հասարակությանը բնորոշ ծառայությունների, մասնավորապես՝ էլեկտրոնային առևտրի որոշ իրավական հայեցակետերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2000 թվականի հունիսի 8-ի 2000/31/ԵՀ հրահանգ՝ (էլեկտրոնային առևտրի մասին հրահանգ) (ՊՏ թիվ L 178, 17.07.2000թ., էջ 1):
13. «Մարդու օգտագործման համար նախատեսված դեղագործական արտադրանքի վերաբերյալ Համայնքի կանոնների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 6-ի 2001/83/ԵՀ հրահանգ՝ 86-100-րդ հոդվածները (ՊՏ L 311, 28.11.2001թ., էջ 67): 2004/27/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 136, 30.04.2004թ., էջ 34):
14. «Սպառողական ֆինանսական ծառայությունների հեռակա շուկայահանման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի սեպտեմբերի 23-ի 2002/65/ԵՀ հրահանգ
15. Ուղեւորների ընդունման մերժման, թռիչքների չեղյալ հայտարարման կամ երկարատեւ հետաձգման դեպքերում ուղեւորներին տրամադրվելիք փոխհատուցման և աջակցության ընդհանուր կանոններ սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2004 թվականի փետրվարի 11-ի թիվ 261/2004 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 46, 17.2.2004թ., էջ 1):